

Գաղտնիության կանոնադրությունները

Գլենդելի քաղաքապետարանը (քաղաքապետարանը) պարտավորվում է պահպանել ձեր անձի և անձնական տվյալների գաղտնիությունը և ապահովությունը երբ այցելում եք այս վեբ կայքը: Այս գաղտնիության քաղաքականությունը բացատրում է, թե ինչպիսի տեղեկություն է հասանելի դառնում Գլենդելի Քաղաքապետարանին և ինչպես է այն օգտագործվում և տալիս է տեղեկություն հետևյալի վերաբերյալ՝

- Տեղեկությունները որոնք մենք ստանում ենք:
- Ինչպես են օգտագործվում այս տեղեկությունները:
- Այս տեղեկությունների տարածումը:
- Տվյալների պահպանումը:
- Հղումներ դեպի արտաքին վեբ կայքեր:
- Երեխաների և գաղտնիության մասին:

Տեղեկություն որ ստացվում և պահպանվում է այս վեբ կայքի կողմից

Տեղեկություն որ տրամադրում եք մեզ՝

Քաղաքապետարանը չի հավաքում անձնական տվյալները այս վեբ կայքում, բացառությամբ երկու դեպքերի՝

- «Կապվել մեզ» էջը պահանջում է էլեկտրոնային փոստի հասցե որպեսզի կարողանանք պատասխանել ձեզ:
- «Բաժանորդագրվել» և «Գրանցվել մեր ամսական նորություններին» էջը նույնպես պահանջում է էլեկտրոնային փոստի հասցե որպեսզի կարողանանք ուղարկել մեր ամսական «Քաղաքապետարանի կապերը» նորությունները:

Վեբ կայքի այցելությունները

Երբ այցելում եք վեբ կայքը, հետևյալ հիմնական տեղեկությունը ավտոմատ կերպով ստացվում և պահվում է այս վեբ կայքի վեբ սերվերի կողմից՝

- Ինտերնետային պրոտոկոլի ծագման հասցեն,
- Ինտերնետի տիրույթի անվանումը,
- Տեղեկություն ձեր համակարգչի կամ բջջային հեռախոսի մասին (օրինակ վեբ բրաուզերի տեսակը և տարբերակը, օպերացիոն համակարգը, էկրանի մաքրությունը և կապի արագությունը),
- Վեբ կայքի էջերը որոնք այցելում եք,
- Վեբ կայքի ինտերնետի հասցեն, որը կապակցել է ձեզ մեր վեբ կայքի հետ, եթե դուք այցելել եք մեր վեբ կայքը մեկ այլ վեբ կայքի միջոցով:

Քաղաքապետարանը օգտագործում է նաև վեբ չափումներ և ձևափոխման տեխնոլոգիաներ (ինչպիսիք են «COOKIES»):

Դուք կարող եք ընտրել «չընդունել COOKIES» ցանկացած վեբ կայքից ներառյալ մեր վեբ կայքից փոխելով ձեր բրաուզերի պարամետրերը: Հավելյալ տեղեկությունների համար կարող եք այցելել USA.GOV:

Էլեկտրոնային փոստով բաժանորդագրվելը

Քաղաքապետարանի էլեկտրոնային փոստի բաժանորդագրման ցուցակը կարգավորելու համար մենք պահպանում ենք էլեկտրոնային փոստի հասցեները, մեր ուղարկած էլեկտրոնային հաղորդագրությունները և ավտոմատ կերպով ստեղծված էլեկտրոնային փոստի տվյալները օգտագործվում են մեր էլեկտրոնային հաղորդակցությունը բարելավելու նպատակով: Ավտոմատ կերպով ստեղծված էլեկտրոնային փոստի տվյալները պարունակում են հետևյալը`

- Բաժանորդի էլեկտրոնային փոստի պատվիրատուին,
- Արդյոք էլեկտրոնային փոստը եղել է բաց,
- Եթե հաղորդագրության միջի հղումը սեղմվել է,
- Արդյոք հաղորդագրությունը հասել է,
- Եթե հաղորդագրությունը փոխանցվել է,
- Եթե հաղորդագրությունը տպվել է,
- Եթե չէք ցանկանում ստանալ մեր հաղորդագրությունները, կարող եք ցանկացած ժամանակ սեղմել «չստանալ նամակներ» հղումը, որը կգտնեք մեր կողմից ուղարկված հաղորդագրության ներքևում:

Ինչպես է տեղեկությունը օգտագործվում

Եթե ձեր ցանկությամբ տրամադրում եք ձեր մասին տեղեկություններ, մենք կարող ենք օգտագործել այն ձեզ հետ կապնվելու, ձեր հաղորդագրությանը պատասխանելու կամ ձեզ տեղեկատվություն տրամադրելու, ձեր պահանջած ծառայությունների վերաբերյալ: Ձեզ որակյալ ծառայություններ տրամադրելու նպատակով, մենք կարող ենք վերլուծել մեզ տրամադրված տվյալների բազայի մի քանի աղբյուրներ:

Մենք կարող ենք օգտագործել մեզ տրամադրված և ավտոմատ կերպով հավաքված տվյալները վիճակագրական վերլուծության նպատակով, որպեսզի տանք մեր գնահատականը, թե ինչպիսի տեղեկություններով են հետաքրքրված օգտագործողները, տեխնիկական դիզայնի առանձնահատկությունները և համակարգի արտադրողականությունը: Մա թույլ է տալիս մեզ, որպեսզի կատարենք մեր վեբ կայքի ընդհանուր բարելավումներ, ինչպես նաև տրամադրել որակյալ բովանդակություն Բնակիչներին:

Այս տեղեկատվության տարածումը

Քաղաքապետարանը օգտագործում է երրորդ կողմի վերլուծական պրովայդեր (այժմ գուգլ վերլուծություն), որպեսզի վերլուծի տրամադրված տվյալները: Երրորդ կողմի վերլուծական պրովայդերը չի ստանում անձնական տվյալներ:

Մենք չենք օգտագործում կամ կիսում ձեր տեղեկությունները կոմերցիոն նպատակների համար և մենք չենք փոխանակում կամ այլ կերպ չենք բացահայտում այս տեղեկությունը բացի վերը նշված դեպքերից:

Տվյալների պահպանումը

Գլենդելի քաղաքապետարանը կպահպանի տեղեկությունները համաձայն տվյալների պահպանման և վերացման օրենքների, որը կարող էք գտնել քաղաքապետարանի վարչական օրենքների գրքույկում գլուխ 7 կետ 3 հատվածում:

Հղումներ դեպի արտաքին վեբ կայքեր

Այս վեբ կայքը և մյուս քաղաքապետարանի պլատֆորմները և էջերը կարող են ուղղորդել ձեզ դեպի այլ վեբ կայքեր, որոնք ստեղծվել և պահպանվում են այլ հասարակական կամ անձնական կազմակերպությունների և անհատների կողմից: Երբ սեղմում եք հղումը, որը ձեզ տեղափոխում է ուրիշ վեբ կայք, դուք լքում եք մեր վեբ կայքը և պետք է հետևեք այդ վեբ կայքի կարգ ու կանոններին: Մենք չենք վերահսկում կամ երաշխավորում տեղեկատվության ճշգրիտ լինելը, իրականությանը համապատասխանելը, ժամանակահատվածը կամ տեղեկության ամբողջականությունը, որը պարունակվում է արտաքին վեբ կայքերում: Մենք նաև չենք խրախուսում վեբ կայքի հովանավորին, իրենց արտահայտած ցանկացած տեսակետները կամ նրանց մատուցած ցանկացած ապրանքները և ծառայությունները: